ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 09.06.01-81

ք. Երևան «14» փետրվար 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը, ի դեմս տնօրեն Ռուբեն Թոփչյանի, (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «1111. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր» ծրագրի «11003. Բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև **59 989 500** (հիսունինը միլիոն ինը հարյուր ութսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար (ներառյալ ԱԱՀ), իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ, սույն պայմանագրով և կից հավելվածով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն

պայմանագրի 5.4 կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարման դեպքում պահանջել հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը, կամ նշված գումարի չափով պակասեցնել հետագա տարիների ֆինանսավորումը, կամ հետագա տարիների պայմանագրերով պարտավորեցնել լրացնել ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարումը,

2.1.7. սույն պայմանագրի 2.4.4 կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.1.8. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջել ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջել վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կազմակերպությունից ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման կազմակերպությանը՝ լրամշակման համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1 կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.4. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.7. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպության կատարողական հաշվետվությունները: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար,

2.4.8. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.9. պետական մարմնին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

2.4.10. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.12. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 22-ը, իսկ ժամանակացույցով պայմանավորվածավելի ուշ ավարտվող միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումից հետո,

2.4.13. պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում համապատասխան չափով գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը պետական մարմինը կազմակերպությանն է վճարում համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան՝ սույն պայմանագրի 2.4. կետում նշված հաշվետվությունն ընդունելուց հետո:

3.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը վճարվում է կազմակերպության բանկային հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կազմակերպության կողմից միջոցառումների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում պետական մարմինն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.4. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2 Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպությանկողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.3 Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

6.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

6.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

6.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

6.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

6.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա

եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային» կենտրոն» հիմնադրամ
ք.Երևան,Կառավարական 2 շենք	ք. Երևան, Օրբելի 22, 0028
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011036705	Հ/Հ 2050042015181001
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 00257269
Նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Տնօրեն՝
_____Վ. Գասպարյան	_____Ռ. Թոփչյան
Կ.Տ. /ստորագրություն/	Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված
2023թ.փետրվարի 14-ին կնքված
N 09.06.01-81 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Իրականացվելիք միջոցառման						
N	**Անվանումը**	**Համառոտ բովանդակությունը**	**Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**Ժամկետները**	**պահանջվող գումարը (դրամ)**
	Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման կազմակերպում	Բարձրագույն ուսումնական հաստատություններում ինստիտուցիոնալ հավատարմագրումների կազմակերպման ապահովում:	1. Հավատարմագրման կարգով նախատեսված գործընթացների իրականացում՝ • բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման, կարիքների ուսումնասիրություն • Հավատարմագրման գործընթացների արդյունավետ իրականացման համար փորձագետների հավաքագրում, վերապատրաստում և որակավորման բարձրացում (տեղացի, միջազգային, ուսանող–փորձագետ) • Դիմած մասնագիտական ուսումնական հաստատությունների (բուհեր) ինստիտուցիոնալ հավատարմագրումների կազմակերպում ***(Հիմք՝ Պետական հավատարմագրման կարգ, ՀՀ Կառավարության 2011թ թիվ 978-Ն որոշում, ՈԱԱԿ փորձաքննությունների անցկացման ձեռնարկ, Փորձագիտական խմբի ձևավորման ընթացակարգ)*** 2. Պետական գրանցամատյանի վարում	1. Բուհերի հավատարմագրման գործընթացների կազմակերպման համար վերապատրաստումներ անցած ինստիտուցիոնալ հավատարմագրման համար տեղացի, ուսանող և միջազգային փորձագետներ (120) 2. Բուհերի կողմից ինստիտուցիոնալ հավատարմագրման դիմումների քանակին համապատասխան կազմակերպված 7 գործընթացներ, 3. Պետական գրանցամատյանում գրանցված ինստիտուցիոնալ հավատարմագրված բուհեր	**29.12.2023**	**17 788 830**

	Բարձրագույն ուսումնական հաստատություն ներում մշտադիտարկում ների իրականացում	Ինստիտուցիոնալ և ծրագրային մշտադիտարկումնե րի իրականացում՝ որակի ներքին ապահովման մեխանիզմների արդյունավետությա ն գնահատման և բարելավման պլանի իրականացման նասով:	1. Ինստիտուցիոնալ և ծրագրային մշտադիտարկումների անցկացում ՈԱԱԿ-ի կազմած ժամանակացույցին և արդյունքային կատարողական ցուցանիշներին համապատասխան: ***Հիմք՝ Պետական հավատարմագրման կարգ, Մուհերի և դրանց կրթական ծրագրերի մշտադիտարկումների քաղաքականություն և ընթացակարգ, ՈԱԱԿ ՀԽ-ի 2021թ. 6_Լ որոշում*** ***ՀՀ Կառավարության 2011թ թիվ 978-Ն որոշում***	Իրականացված 10 ինստիտուցիոնալ և ծրագրային մշտադիտարկումներ	**29.12.2023**	**14 824 025**
	Մասնագիտական կրթության վերաբերյալ թեմատիկ վերլուծություններ (բարձրագույն կրթություն)	Բարձրագույն կրթության համակարգի նախորդ 5 տարիների արդյունքների ուսումնասիրություն, հավաքագրված տվյալների վերլուծություն և համակարգային վերլուծության կազմում:	**1.** Բարձրագույն կրթության համակարգի համակարգային վերլուծություն: ***ՀՀ կառավարության 2008թ. 1486-Ն որոշում***	Կազմված և կայնքում հրապարակված 1 թեմատիկ համակարգային վերլուծություն	**29.12.2023**	**1 000 000**

	Շահակիցների համար աշխատաժողովների կազմակերպում	Բուհեի, փորձագետների, ուսանողների, բուհերի որակի ապահովման կենտրոնների, դասախոսների համար կրթության որակի վերաբերյալ աշխատաժողովների կազմակերպում և անցկացում	1. Շահակիցների կարիքների ուսումնասիրություն և աշխատաժողովի թեմայի հաստատում 2. Ըստ անհրաժեշտության շահակիցների թիրախային խմբի ընտրություն և աշխատաժողովի կազմակերպում, այդ թվում հեռավար ***Հիմք՝ ՈԱԱԿ-ի կանոնադրություն*** ***ՀՀ կառավարության 2008թ. 1486-Ն որոշում***	Կազմակերպված և անցկացված 2 աշխատաժողով	**29.12.2023**	**800 000**
	Որակի ապահովման ոլորտային չափանիշների մշակման աշխատանքների իրականացում, փաստաթղթերի մշակում	Ծրագրային հավատարմագրումներ իրականացնելու համար ոլորտային որակավորումների շրջանակների մշակման աշխատաններին մասնակցություն:	1. Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություններ՝ ըստ մշակվող ոլորտային որակավորումների շրջանակների: 2. Համապատասխան առաջարկությունների փաթեթի պատրաստում և ուղարկում ԿԳՄՄՆ: 3. ԿԳՄՄՆ-ի կողմից ստեղծված աշխատանքային խմբերում մասնակցություն, քննարկումներ;	Ուսումնասիրված, մշակված և առաջարկությունների տեսքով ուղարկված փաստաթղթերի փաթեթներ	**29.12.2023**	**578 395**
	Հիմնադրամի գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկում	Հասարակությանը տեղեկատվության տրամադրում Հիմնադրամի կայք-էջով, ԶԼՄ-ների հետ համագործակցելով՝ շահակիցների ներգրավմամբ	Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ կարողությունների և կրթական ծրագրերի որակի վերաբերյալ հաշվետվողականություն հասարակությանը. տարեկան համաժողովների, ընթացիկ աշխատաժողովների միջոցով ՈԱԱԿ-ի գործունեության թափանցիկության ապահովում՝ կայք-էջի հրապարակումներով ***Հիմք՝ ՈԱԱԿ-ի կանոնադրություն***	ՈԱԱԿ կայք էջում, սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկություններ ՈԱԱԿ իրականացրած հավատարմագրումների, մշտադիտարկումների և գործունեության մասին Առնվազն 100 հրապարակումներ:	**29.12.2023**	**2 000 000**

			ՀՀ կառավարության 2008թ. 1486-Ն որոշում			
	Միջազգային ծրագրերում և կառույցներում անդամակցում և մասնակցության ապահովում	Մասնակցություն որակի ապահովման միջազգային կառույցների աշխատանքներին, որոնց անդամակցում է ՈԱԱԿ-ը (ENQA, EQAR, CEENQA, INQAHEE)	1. Մասնակցություն որակի ապահովման միջազգային կառույցների աշխատանքներին, որոնց անդամակցում է ՈԱԱԿ-ը (ENQA, EQAR, INQAHEE, CEENQA) 2. Բոլոնիայի Որակի Ապահովման Փոխաջակցության Խմբի աշխատանքներում մասնակցություն 3. Մասնակցություն ԵԲԿՏ-ում Որակի ապահովման համակարգերի կապը DEQAR-ի (փորձագիտական զեկույցների շտեմարանի) միջոցով: ***Հիմք՝ ՈԱԱԿ-ի կանոնադրություն*** ***ՀՀ կառավարության 2008թ. 1486-Ն որոշում***	1. Մասնագիտական կրթական համակարգի միջազգայնացման նպաստում նշված կառույցներում ՈԱԱԿ-ի միջոցով 2. Հավատարմագրումների միջոցով մուտերի ճանաչելիության, գրավչության և թափանցիկության խթանում ԵԲԿՏ-ում **3.** Փորձի ուսումնասիրության արդյունքների տեղայնացում ՈԱԱԿ գործունեությունը կարգավորող իրավական ակտերում, դրանց վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում մուտերին **4.** Հայկական բուհերի շնորհած որակավորումների միջազգային ճանաչում	**29.12.2023**	**7 000 000**
	Բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի արտաքին ապահովման իրավական հիմքերի մշակում	Բարձրագույն ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման չափանիշների վերանայում և ընթացակարգերի, քաղաքականությու	1. Հավատարմագրման և արտաքին գնահատման գործընթացները կազմակերպելու համար իրավական հիմքերի մշակում, վերանայում, առաջարկությունների փաթեթի պատրաստում (Բարձրագույն ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրման նոր կարգի նախագծի մշակման շարունակություն, փաթեթի պատրաստում, պետական գրանցամատյանի վարման կարգի լիազոր մարմնի կողմից հաստատման ներկայացում, ՈԱԱԿ կանոնադրության փոփոխությունների մշակման ձեռնարկում) 2. Հավատարմագրման կարգից բխող ձևաչափերի վերանայում, այդ թվում փորձաքննության ձեռնարկներ 3. Պետական հավատարմագրման չափանիշների	Ներկայացված, քննարկված, վերանայված կամ հաստատված 2 իրավական ակտեր	**29.12.2023**	**6 000 000**

		ների, ընթացակարգերի մշակում	վերանայման աշխատանային խմբի ձևավորում և աշխատանքների տանում, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություններ ***Հիմք՝ ՈԱԱԿ-ի կանոնադրություն*** ***ՀՀ կառավարության 2008թ. 1486-Ն որոշում***			
	Միջոցառման գումար՝					**49 991 250**
	ԱԱՀ՝					**9 998 250**
	Ընդամենը					**59 989 500**

Հայաստանի Հանրապետության կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն 2

ՀՎՀՀ 02698732

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011036705

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ

ք. Երևան, Օրբելի 22, 0028

ՀՎՀՀ՝ 00257269

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ

Հ/Հ 2050042015181001

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
_____ Վ. Գասպարյան

Տնօրեն՝
_____ Ռ. Թոփչյան